ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 40-Ա

«12» սեպտեմբերի 2018 թվական գյուղ Ամասիա

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՄԱՍԻԱ ԵՎ ՀՈՎՏՈՒՆ / ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 123 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի (Ամասիա և Հովտուն բնակավայրերի) հողերի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքում գտնվող «ԷՐՍՏԵԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող Ամասիա բնակավայրի գյուղատնտեսական նպատակային նշանակության **4.0715 հեկտար արոտից 0.1259 հեկտար** (կադաստրային ծածկագիր՝ 08-010-0121-0003) և Հովտուն բնակավայրի գյուղատնտեսական նպատակային նշանակության **1.8054 հեկտար արոտից 0. 2205 հեկտար** (կադաստրային ծածկագիր՝ 08-070-0429-0008) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակություն՝ այդ հողամասերում

«ԷՐՍՏԵԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կառուցված և շահագործվող փոքր հիդրոէլեկտրակայանի գլխամասային հանգույցների կառուցվածքների նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանին՝

1) ապահովել սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 9	*Դեմ՝ 0*	*Ձեռնպահ՝ 0*
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝	----------	----------	----------
ՍԵՐՈԲ ՂՈՒԿԱՍՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝	----------	----------	----------
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝	----------	----------	----------
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝	----------	----------	----------
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«12» սեպտեմբերի 2018 թվական
գյուղ Ամասիա